ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.06.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-29/13 բողոքը քննող հանձնաժողով

ԳԲԽ-29/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից 14.05.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-29/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն հայտնել է հետևյալը.

Բողոքի առարկան.

02.04.2013թ. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարված N «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» ծածկագրով շրջանակային համաձայնագրով «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն հրավեր չի ստացել և մրցույթը կայացվել է առանց ընկերության մասնակցության:

Բողոքի փաստային և իրավական հիմքերը, ապացույցները.

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեի հետ կապված առաջացել է խնդիր, որի վերաբերյալ ընկերության կողմից 11.03.2013թ. N 18 գրություն է ներկայացվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին: Կառավարության գործող օրենքի համաձայն /168Ն 116 ենթակետ/ 5-օրյա ժամկետում պետք է կատարվեր համապատասխան փոփոխությունը: Փոփոխության մասին գրությունը կայքում տեղադրվել է ավելի ուշ (03.04.2013թ.), որի արդյունքում ընկերությունը բազմաթիվ հրավերներ չի ստացել, այդ թվում մասնավորապես նաև 02.04.2013թ. ՀՀ ԱԻՆ-ի կողմից հայտարարված N «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» մրցույթը, որն արդեն կայացվել է 11.04.2013թ. առանց ընկերության մասնակցության:

Բողոքի պահանջը.

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն խնդրել է ընկերության գրությունը համարել բողոքարկում, ընթացք տալ խնդրին և օրենսդրությանը համապատասխան կազմակերպել նոր մրցույթ:

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 17.05.2013թ. N 04/032-737 գրությամբ դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.05.2013թ. «Արցախ Կարի-Կոշիկ Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 24.05.2013թ. N 7/50.1/4207-13 գրությամբ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման պահանջների համաձայն ՀՀ ԱԻՆ «Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու համար 02.04.2013թ. հայտարարել է «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» ծածկագրով գնման ընթացակարգ: Նույն օրը գնման ընթացակարգի հրավերն ուղարկվել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում գրանցված բոլոր մասնակիցներին, այդ թվում և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ին:

Պատվիրատուն գտնում է, որ գնման ընթացակարգը չեղյալ հայտարարելու հիմքեր չկան, քանի որ այն կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան, ապահովվել է օրենքի 6-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների պահանջները և ընթացակարգի հայտն առաքվել է գրանցված մասնակիցներին էլեկտրոնային այն հասցեներով, որով գրանցված են եղել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում, իսկ ինչ վերաբերվում է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեի փոփոխությանը, ապա այն Պատվիրատուի իրավասությունից դուրս է և չի մտնում վերջինիս գործառությունների մեջ:

<u>3. ԳԲԽ-29/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից օրենսդրությանը համապատասխան նոր մրցույթ կազմակերպելու պահանջի վերաբերյալ 14.05.2013թ. ներկայացված բողոքը մերժել:

4. <u>ԳԲԽ-29/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-29/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Բողոքաբեր ընկերություն) կողմից 14.05.2013թ. ներկայացված բողոքը, «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 29.05.2013թ. N 7/50.1/4207-13 գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ):

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ իրենց էլեկտրոնային հասցեի հետ կապված առաջացել էր խնդիր, որի վերաբերյալ ընկերության կողմից 11.03.2013թ. N 18 գրություն է ներկայացվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին: Փոփոխության մասին գրությունը կայքում տեղադրվել է (03.04.2013թ.), որի արդյունքում ընկերությունը ընթացակարգի հրավեր չի ստացել և ընթացակարգը կայացվել է առանց ընկերության մասնակցության:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 24.05.2013թ. Կենտրոնին ներկայացված N 7/50.1/4207-13 գրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ ԱԻՆ «Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու համար 02.04.2013թ. «ՇՀԱՊՁԲ-ԱԻՆ-13-1-11/10-50» ծածկագրով հայտարարել է գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի հրավերն ուղարկվել է գրանցված բոլոր մասնակիցներին, այդ թվում և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ին: Պատվիրատուն նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել նաև բողոքաբեր ընկերությանն ուղարկված էլեկտրոնային ծանուցման քաղվածքը, որի ուսումնասիրությունից պարզվեց, որ 2013թ. ապրիլի 2-ին Պատվիրատուի piu.ra@mail.ru էլեկտրոնային հասցեից բողոքաբեր ընկերության artsakhgrop@bionet.am էլեկտրոնային հասցեին է ուղարկվել Ընթացակարգին մասնակցելու հրավերը:

Կարգի 41-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ գնումների կամ նախաորակավորման հայտարարության և (կամ) հրավերի տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավերը, էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, եթե գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով: Այսինքն, Պատվիրատուի կողմից պահպանվել են Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

12.03.2013թ. «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն դիմում է ներկայացրել Կենտրոնին և հայտնել, որ ընկերության artsakhgrop@bionet.am էլեկտրոնային հասցեի հետ կապված առաջացել է որոշակի խնդիր, որի պատճառով անհրաժեշտ է 15.11.2011թ. և 24.12.2012թ. կնքված համապատասխանաբար NN ՇՀԱՊՁԲ-11/10-20 և ՇՀԱՊՁԲ-11/11-180 ծածկագրերով շրջանակային համաձայնագրերում կատարել էլեկտրոնային հասցեի փոփոխություն: Կենտրոնը, բողոքաբեր կազմակերպության կողմից պահանջվող փոփոխությունը կատարելու նպատակով, 15.03.2013թ. թիվ 04/021-453 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Բողոքաբեր ընկերությունը ներկայացված բողոքում նշել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման մասին» կարգի 116-րդ կետի համաձայն փոփոխությունը պետք է կատարվեր հինգօրյա ժամկետում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 116-րդ կետը (ուժը կորցրել է ՀՀ կառավարության 18.04.13թ. N 372-Ն որոշմամբ) կարգավորում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառումը և վերաբերելի չէ շրջանակային համաձայնագրերում կատարվող փոփոխությունների ժամկետներին: Բացի այդ շրջանակային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու և հրապարակելու վերաբերյալ ժամկետներ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:

Այսպիսով գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից օրենսդրությանը համապատասխան նոր մրցույթ կազմակերպելու պահանջի վերաբերյալ 14.05.2013թ. ներկայացված բողոքն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի կողմից 14.05.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամներ՝ Էդվարդ Գրիգորյան